ղերը եւ-երով սկսելն է[19], որ մեր օրինակում նկատելի է 3, 5, 6, 7, 8, 9, 10, 13, 14, 15, 16-րդ տողերում, որ բացառութեամբ 6, 9 եւ 14-րդի, համընկնում են միջակէտերի եւ ստորակէտերի առաջադրած բաժանումներին: Եթէ սրան յաւելենք, որ իւրաքանչիւր տող բաժանւում է միւսներից նաեւ իմաստային-տրամաբանական առումով, ապա կը տեսնենք, որ տողատումը միանգամայն ընդունելի է:

Ասուածն ի մի բերելով՝ կարող ենք վստահաբար պնդել, որ Պատմահայր Մովսէս Խորենացու Պատմութեան Բ. գրքի Կ. գլխում հանդիպող հատուածն առնուած է Հայոց հին վէպից եւ տողատուած վիճակում ունի վերեւում ներկայացուած տեսքը: Չէինք կամենայ որեւէ գնահատական տալ այս տասնվեցտողեայ բանաստեղծութեանը, որովհետեւ անկարելի է գովերգել ոսկին կամ թանկարժէք ակնեղէնը. բաւարար է ասել, որ սա Գողթան երգ է, Գողթան մասունք:

19 Հմմտ., օրինակ, Սաթենիկին փախցնելու տեսարանը:

ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ՝ ԸՍՏ ՅՈՅՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ (ՀԵԿԱՏԷՈՍ - ՀԵՐՈԴՈՏՈՍ - ՔՍԵՆՈՓՈՆ)

Յակոբ Յարութիւնեան

Ք.ա. VI դարի սկզբներին (մօտ 580-ական թթ.), ըստ գրականութեան մէջ արմատաւորուած տեսակէտի, կործանուեց Ուրարտուի թագաւորութիւնը եւ նրա տեղում աւարտուեց Երուանդունիների համահայկական առաջին պետութեան ձեւաւորումը: Այս պետականութեան պատմութեան ուսումնասիրութեան համար առաջնահերթ նշանակութիւն ունեն յոյն մատենագիրների երկերում պահպանուած վկայութիւնները, առաջին հերթին՝ Հեկատէոս Միլեթացու, Հերոդոտոսի եւ Քսենոփոնի, որոնք ապրել են այդ ժամանակաշրջանում: Ինչպէս ցոյց են տալիս նրանց հաղորդած տուեալները, հէնց նրանց օրօք էլ առաջին անգամ իրականացուել է հայկական բոլոր տարածքների միաւորումն այս պետականութեան սահմաններում: Մինչեւ Երուանդունիները երկրի տարբեր շրջաններում, յատկապէս՝ հեռաւոր ծայրամասերում տեղի կառավարիչներն իրենց հռչակել էին անկախ՝ վարելով կենտրոնախոյս քաղաքականութիւն: Պարոյր Սկայորդին, որին Մովսէս Խորենացին համարում է առաջին հայոց արքան, չի կարողանում իր տիրապետութիւնը հաստատել ողջ հայկական լեռնաշխարհի վրայ, որը նախկինում պատկանել էր Ուրարտուի թագաւորներին[1]: Երկրում ստեղծուած իրավիճակի կապակցութեամբ Ս. Տ. Երեմեանը գրում է. «Այսպիսով, Արմէ-Շուպրիայում Ք.ա. 652-612 թուականների ժամանակահատուածում թագաւորում է հայ-սկիւթական ծագում ունեցող ցեղապետ Պարոյրը, իսկ Բիայնիլիում VI դարի սկզբներին իշխանութեան գլուխ է անցնում հայկական Երուանդունի տոհմը: Այնուհետեւ Արմէ-Շուպրիան եւ Բիայնիլին միաւորւում են եւ կազմում մի ընդարձակ Հայկական թագաւորութիւն, որը հայերի մէջ կոչուեց Հայք, իսկ հարեւանների մէջ՝ Արմինա, Արմէնիա»[2]: Եթէ Ուրարտուի օրօք միասնական պետութեան գերիշխանութիւնը տարածւում էր հայկական ողջ լեռնաշխարհի վրայ, որի մեծագոյն մասը հետագայում, Երուանդունիների օրօք, ստացաւ Մեծ Հայք անուանումը, ապա այս երկուսի միջեւ ընկած ժամանակահատուածում, Ք.ա. 580-570-ական թթ., այստեղ բնակուող ցեղերի մեծ մասն իրեն անկախ էր հռչակել[3]: Բնականաբար ծագում է այն հարցը, թէ ինչով էր պայմանաւորուած այդ անջատուածութիւնը: Առաջին շրջանում դա արդիւնք էր ինչպէս միասնական սոցիալ-տնտեսական բազայի, այնպէս էլ հայկական կոյնէի բացակայութեան[4]:

1 Տե՛ս **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, քնն. բնագիրը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրաց. Ա. Բ. Սարգսեանի, Եր., 1991, Ա, իա, իբ:

2 *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, Հայաստանը նախնադարեան-համայնական եւ ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, խմբ. Ս. Տ. Երեմեանի, Եր., 1971, էջ 438

3 Այս փաստի օգտին է խօսում ներկայումս յայտնաբերուած ուրարտական արձանագրութիւնների «աշխարհագրութիւնը», որոնք գտել են Մելիդ-Մալաթիայից մինչեւ Կասպից ծովի արեւմտեան ափերն ընկած տարածքներում: Աւելի մանրամասն տե՛ս **Г. А. Меликишвили**, *Урартские клинообразные надписи*, Москва, 1960, passim; **Н. В. Арутюнян**, *Корпус урартских клинообразных надписей*, Ереван, 2001, passim:

4 Առաջացած տոհմա-լեզուային իրադրութեան կապակցութեամբ մանրամասն տե՛ս **И. М.**

© National Library of Armenia

Մանրամասն քննութեան եւ վերլուծութեան չենթարկելով այդ հիմնահարցերը՝ մենք համամիտ ենք Ի. Մ. Դեակոնովի հետեւեալ եզրայանգմանը. «Գիտութեան մէջ երկար ժամանակ գերիշխող է եղել այն տեսակէտը, ըստ որի՝ հայերն ու հայերէն լեզուն նոյնանուն լեռնաշխարհում յայտնուել են այն ժամանակ, երբ առաջին անգամ յիշատակուել է Հայաստան անունը, որը եղել է Ք.ա. VI դարում, եւ գտնում են, որ այդ ժամանակից էլ սկսւում է հայ ժողովրդի պատմութիւնը: Դա, ի հարկէ պարզամիտ կարծիք է եւ բոլոր առումներով քննադատելի»[5]: Դա իսկապէս այդպէս է, քանզի եթէ մենք սկիզբ համարենք միասնական հայերէնի ձեւաւորումը, ապա համաձայն Ստրաբոնի՝ հայերէնը lingua franca*-ից՝* lingua koine*-ի է վերածուել Ք.ա. II դարի սկզբներին, երբ արդէն տեղի ունեցաւ հայկական հողերի երրորդ վերամիաւորումը մէկ պետականութեան շուրջը Արտաշէսեանների կողմից (առաջինը եղել էր Ուրարտուի, իսկ երկրորդը՝ Երուանդունիների օրօք): Այս կապակցութեամբ Ստրաբոնը գրում է. «...այնպէս որ այժմ բոլորն էլ խօսում են մէկ լեզուով (ὁμογλῶττους εἶναί)»[6]: Այժմ մեզ անհրաժեշտ է պարզաբանել, թէ որ ցեղերն էին ապրում հայկական լեռնաշխարհի տարածքում եւ թէ ինչպիսի սահմաններ էր ընդգրկում Երուանդունիների հայկական պետութիւնը՝ համաձայն յոյն մատենագիրների, առաջին հերթին՝ Հեկատէոս Միլեթացու վկայութիւնների համապատասխան: Առաջիններից մէկը նա յիշատակում է կորակսներին, որոնք ունէին կոլխիդեան ծագում, եւ այս մասին վկայում է. «Կորակսներ, կոլխերի ցեղից, կոլերի հարեւանութեամբ, կորակսեան ամրոցով եւ նոյնանուն երկրով»[7]: Այս վկայութիւնից դժուար է եզրակացնել, թէ կորակսները Կոլխիդայի որ մասում են ապրել: Հարցը բարդանում է այն պատճառով, որ կորակսների մասին չեն յիշատակում յաջորդ դարաշրջանի մատենագիրները՝ Հերոդոտոսը, Քսենոփոնը, Դիոդորոս Սիկիլացին, Ստրաբոնը, որոնք բոլորն էլ բաւականին քաջածանօթ են հայկական լեռնաշխարհի հիւսիսարեւմտեան ծայրամասի ցեղերի տեղադրութեանը՝ հայ-կոլխիդա-կապադովկեան սահմանագլխին:*

Գորդեան այս հանգոյցի պարզաբանման կապակցութեամբ, որ առկայ է 185-րդ հատուածում, մեզ անհրաժեշտ է տեսնել, թէ ինչ է ասում այս հեղինակը հետագայ շարադրանքում: Բարեբախտաբար մեզ է հասել նոյն հեղինակի մէկ այլ վկայութիւն, եւ 188-րդ հատուածում նա գրում է. «Մոսխեր, կոլխերի ցեղից, որոնք հարեւան են մատիեններին»[8]: Մոսխերի անունով են կոչւում նաեւ Մոսխական լեռները, որոնք Պարիադրէսի կամ Պարխարեան լեռների շարունակութիւնն են (հին լատ. Moschius mons*): Այժմ վերջինս աւելի շատ յայտնի է Լազիստանեան լեռնաշղթայ, իսկ Մոսխականը՝ Աջարա-Իմերեթական լեռներ անուամբ: Եթէ Հեկատէոսին յաջորդողները ոչինչ չգիտեն մոսխերի մասին, ապա դա չի խանգարել, որ նրանց վերաբերեալ բաւականին մանրամասն յիշատակի Ստրաբոնը, որը գրում է. «Մոսխիկէն (Μοσχίκή), ուր կայ նշանաւոր մի տաճար, ունի երեք մաս. առաջինը զբաղեցնում են կողքիսցիները, երկրորդը՝ վրացիները, երրորդը՝ հայերը (խօսքը վերաբերում է Լեւկոթէոսի տաճարին, որը գտնւում էր Ֆրիսկոսի պատգամախօսարանի կողքին – Յ. Յ.)»[9]: Եթէ այս նկարագիրը ամբողջովին համապատասխանում է ստրաբոնեան դարաշրջանում Մեծ Հայքի եւ Վիրքի միջեւ գոյութիւն ունեցած սահմաններին, ապա պէտք է եզրակացնել, որ Ստրաբոնի բոլոր միւս վկայութիւններն այս տարածաշրջանի վերաբերեալ մեծապէս փոխառնուած են Հեկատէոսից: Դա շատ դէպքերում այդպէս է, միայն այն տարբերութեամբ, որ նա երբեմն յաւելում, լրացնում է Հեկատէոսին, յատկապէս՝ իւրաքանչիւր տեղանքի լեռնագրութեան (օրոգրաֆիայի) եւ ջրագրութեան (հիդրոգրաֆիայի) նկարագրութեամբ: Դա առկայ է նաեւ վերոյիշեալի կապակցութեամբ, երբ Ստրաբոնը գրում է. «Հայաստանի հարաւը պաշտպանուած է Տաւրոսով, որ բաժանում է այն Եփրատի եւ Տիգրիսի միջեւ գտնուած ամբողջ երկրից, որը կոչւում է Միջագետք: Արեւելքից այն սահմանակցւում է Մեծ Մարաստանին եւ Ատրպատականին, հիւսիսում գտնւում են Կասպից ծովից վերեւ՝ Պարքոաթրոսի լեռները եւ Աղուանքն ու վրացիները եւ Կովկասը, որ շրջապատում է այդ ժողովուրդները եւ, հասնելով Հայաստանին, միանում է Մոսքիկեան եւ Կողքիսի լեռներին, մինչեւ Տիբարենների կոչուած երկիրը: Արեւմուտքում գտնւում են այս տիբարենի ժողովուրդը եւ Պարիադրէս լեռը, եւ Սկիւդիսես լեռը՝ մինչեւ Փոքր Հայք եւ Եփրատի հովիտը, որ բաժանում է Հայաստանը Կապադովկիայից եւ Կոմագենից»[10]: Ստրաբոնի այս վկայութիւնը պարզորոշ ցոյց է տալիս, որ այն արդիւնք է նախկին մի քանի սերունդների հաղորդած վկայութիւնների վերամշակման՝ սկսած Հեկատէոսի յայտնած տուեալներից եւ վերջացրած Դիոդորոսի վկայութիւններով: Ի՞նչն է մեզ առիթ տալիս նման ենթադրութեան: Վերեւում նշեցինք, որ ըստ Ստրաբոնի՝ Ք.ա. II դարի սկզբին Մեծ Հայքի թագաւորութեան բոլոր ծայրամասերում խօսում էին հայերէն, բայց, միաժամանակ հետեւելով նախորդ դարաշրջանի մատենագիրներին, նա կրկին յիշատակում է որոշ ոչ հայախօս ցեղերի վերաբերեալ, որոնք պէտք է որ արդէն ձուլուած լինէին տեղաբնիկների, իսկ առաջին հերթին՝ հայերի եւ վրացիների հետ: Հեկատէոսը, ինչպէս նշուեց վերեւում, խօսում է մոսխերի, մատիեններ եւ տիբարենների վերաբերեալ, որը կրկնում է Պատմահայր Հերոդոտոսը: Քսենոփոնն իր* Անաբասիսում *երկիցս յիշատակում է տիբարեններին, իսկ Դիոդորոսն ընդհանրապէս ոչինչ չգիտէ նրանց վերաբերեալ: Վերջինիս կրտսեր ժամանակակից Ստրաբոնն, ինչպէս տեսանք, բազմիցս խօսում է ոչ միայն մոսխերի, այլեւ տիբարենների վերաբերեալ:*

Հեկատէոսի եւ Ստրաբոնի վկայութիւնների համադրութիւնը ցոյց է տալիս, որ մոսխերը տեղակայուած են եղել Փասիս կամ ներկայիս Փոթի եւ Տրապիզոն քաղաքների միջեւ, իսկ աւելի ստոյգ՝ Ճորոխի (Արպաս, Ակամսիս, Բոաս) գետաբերանում եւ ստորին հոսանքի շրջանում՝ ներկայիս Աջարիայի տարածքում: Նոյնն է վկայում նաեւ Հերոդոտոսը, երբ տալիս է Աքեմենեան Իրանի վարչա-տարածքային բաժանման նկարագիրը (Դարեհ Ա-ի դարաշրջանում): Վերջինս գրում է. «Մոսխերի, տիբարենների, մակրոնների, մոսսինոյկների եւ մարերի վրայ սահմանուեց երեք հարիւր տաղանդ (հարկ). սա տասնիններորդ նահանգն էր»[11]: Այս յիշատակումը համարեա ոչնչով չի տարբերւում նրա մէկ այլ վկայութիւնից, որտեղ պատմիչը խօսում է պարսիկների՝ Ցունաստան ար-

---

Дьяконов, *Предыстория армянского народа. История армянского нагорья с 1500 по 500 г. до н. э. Хурриты, лувийцы, протоармяне*, Ереван, 1968, էջ 190 եւ յաջ.:

5 Տե՛ս *նոյն տեղում*, էջ 195:

6 The Geography of Strabo, L. 1960, XI, XIV, 5

7 *Fragmenta historicorum graecorum*, ed. **C. Müller**, Paris, 1883, Hecateus, fr. 185; **F. Jacoby**, *Fragmente der griechischen Historiker*, Lipsiae, 1923, 210 (այսուհետեւ փակագծում համապատասխան հատուածն՝ ըստ Ֆ. Յակոբիի հրատարակութեան).

8 *Նոյն տեղում*, fr. 188 (F. Jacoby, 288)

9 **Strabo**, XI, II, 18

10 *Նոյն տեղում*, XI, XIV, 1. տե՛ս նաեւ I, III, 21; XI, II, 1; XI, XII, 4; XII, III, 18:

11 Հերոդոտոս, *Պատմութիւն ինը գրքից*, թարգմ. Ս. Մ. Կրկեաշարեանի, Եր., 1986, III, 94

© National Library of Armenia

շաւելու մասին[12]: Այստեղ եւս մոսխերի կողքին, նոյն զօրաշարքում են հարեւան ժողովուրդները՝ տիբարենները, մակրոնները եւ մոսսինոյկները: Ինչ վերաբերում է մատիեններին, ապա այստեղ եւս Հեկատէոսին կրկին լրացնում է Հերոդոտոսը, որն առաջին իսկ յիշատակութեան ժամանակ նրանց տեղակայում է Հալիս (ներկայիս Կըզըլ-Իրմակ) գետի աջ ափին՝ գրելով. «Քանզի մեդական տէրութեան եւ լիւդիական տէրութեան միջեւ սահմանը Հալիւս գետն էր, որը հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով, այնուհետեւ (հոսում է)՝ աջից մատիեններին եւ ձախից փռիւգիացիներին սահման ունենալով»[13]: Այսպիսով, եթէ համարենք, որ խօսքը միեւնոյն ցեղի մասին է (այլ ոչ թէ նոյնանուն երկու ցեղերի), ստացւում է, որ Հեկատէոսից մինչեւ Հերոդոտոսն ընկած ժամանակահատուածում, մօտ 20-30 տարիների ընթացքում, մատիեններն Ակամսիս գետի աւազանից շարժուել են արեւմուտք եւ զբաղեցրել Հալիսի աջ ափը[14]:

Մատիենների կապակցութեամբ պէտք է կատարել նաեւ հետեւեալ պարզաբանումը: Հեկատէա-Հերոդոտոսեան մատիեններին չպէտք է նոյնացնել ստրաբոնեան մատիանների հետ (ματιηνή-ματιανή), որը կատարում է Գ. Ա. Ստրատանովսկին Ստրաբոնի Աշխարհագրութեան *ռուսերէն թարգմանութեան մէջ: Վերջիններիս կապակցութեամբ Ստրաբոնը ոչ միայն մանրամասն նկարագրում է նրանց զբաղեցրած տարածքը, այլեւ տալիս կենցաղի նկարագիրը: Անդրադառնալով Ատրպատականեան Մարաստանի տեղադրութեան խնդրին՝ նա գրում է. «Երկիրը գտնւում է արեւելքից՝ Հայաստանի եւ Մատիանէի (եւ ոչ թէ Մատիենէի – Յ. Յ.) մօտ, արեւմուտքից՝ Մեծ Մարաստանի, իսկ հիւսիսից՝ այս երկու երկրների մօտ: Հարաւից գտնւում է Վրկանաց ծովի խորքի շուրջը տեղակայուած երկրների եւ Մատիենէի մօտ»[15]: Այնուհետեւ նա այդ մարզը համեմատում է Շակաշենէի (այսինքն՝ Ուտիք նահանգի մի հատուածի) եւ Արաքսենէի հետ՝ հաւանաբար նկատի ունենալով Արաքսի գետաբերանը: Այստեղ խօսքը հայկական Արաքսի մասին է, քանզի հետագայ շարադրանքում, հետեւելով Հերոդոտոսին, նա այս Արաքսը համարում է ջրային սահման Հայաստանի եւ բուն Մարաստանի (եւ ոչ թէ Մեծ Մարաստանի կամ Մարական կայսրութեան) միջեւ, որի հիւսիսային մասը նա անուանում է Մատիենա, որն իրականում լինելու էր Մատիանա[16]: Հերոդոտոսն, ի տարբերութիւն Ստրաբոնի, սխալւում է, երբ բաժանում է Արաքսը քառասուն ճիւղերի, որն աւելի նման է Օքսին կամ Ամու-Դարիային կամ էլ Եաքսարտին, որն այժմ կոչւում է Սիր-Դարիա: Այս գետերն անտիկ հեղինակները յաճախ են շփոթել: Նոյնին մենք հանդիպում ենք նաեւ Ստեփանոս Բիւզանդացու մօտ, երբ նա նշում է. «...միւս Արաքսը, որ Փասիսում է, քանզի այդպէս է կոչում Պենէոսը* αραξοί *բայից, որ նշանակում է պատռել: Տեղացիներն անուանում են* Արաքսեան ջուր[17]: *Որ Մատիենան*

12 Տե՛ս *նոյն տեղում*, VII, 78:

13 *Նոյն տեղում*, I, 72, նաեւ՝ III, 94, V, 49, VII, 72

14 **Յ. Խորիկեան**, *Սատրապական Հայաստանի արեւմտեան եւ հարաւային սահմանները մ.թ.ա. VI-IV դարերում*,- «Պատմա-բանասիրական հանդէս», 2005, թիւ 3, էջ 173-192:

15 **Strabo**, XI, XIII, 2

16 Տե՛ս **Strabo**, XI, XIV, 13: Արաքսների խնդիրն հանգամանօրէն քննարկուել է Ա. Վ. Պոդոսինովի կողմից: Տե՛ս **Т. Н. Джаксон, Т. М. Калинина, И. Г. Коновалова, А. В. Подосинов**, *Речные пути Восточной Европы в античной и среднеквековой географии*, Москва, 2007, էջ 94-95 (հեղ. Ա. Վ. Պոդոսինով):

17 **Stephani Byzantii**, *Ethnicorum quae supersunt.* Ex recensione A. Meinekii, v. I, Ber., 1849, Արաքս յօդուածը. տե՛ս նաեւ **В. В. Латышев**, *Известия древних писателей о Скифии и Кавказе*, ВДИ, 1948, N 3, էջ 315:

տեղակայուած է եղել Սեւ ծովի ափին՝ Ճորոխի գետաբերանի հիւսիս-արեւմուտքում Պարիադրէսի լեռների, իսկ հիւսիս-արեւելքում՝ Մոսխականի միջեւ՝ մոսխ ցեղերի հարեւանութեամբ, կարելի է եզրակացնել Հեկատէոսի մէկ այլ վկայութեան օգնութեամբ: Վերջինս նշում է, որ այն գտնուել է ծովի մօտ եւ անտառածածկ լեռների հարեւանութեամբ[18]: Այդ լեռների մասին նա մասնաւորապէս խօսում է 285-րդ հատուածում եւ դրանք անուանում է Ռիպէական: Այդ անուանումն, ըստ Լ. Ա. Ելնիցկու կարծիքի, կապւում է աստուածաշնչեան Ռիֆի կամ Ռիֆատի հետ[19]: Rip(h)aeus montes *անուանումն, ըստ մեզ, ունի լատինական ծագում եւ նշանակում է պարզապէս* ծովափ: *Այստեղից բխում է այլ հարց, թէ ո՞ր լեռներն է յոյն Հեկատէոսն անուանում այդպէս. Կովկասեա՞ն, որտեղ նրա/եւ իր հայրենակիցների համար աւարտւում էր օյկումեմէն այդ ժամանակ, Պարիադրէսեա՞ն, թէ՞ գուցէ Մոսխական: Մեր կարծիքով, խօսքը վերաբերում է վերջին երկուսից մէկին, որոնք Հեկատէոսի օրօք միասին վերցրած կոչուել են Պարալիա լեռներ* (Παραλία – *յուն.* ծովափ *բառից*): *Այդ տեղանքն այժմ էլ ծածկուած է համարեա անանցանելի անտառներով: Հռոմէացիները, որոնք փոխարինեցին յոյներին փոքրասիական մերձսեւծովեան շրջաններում, այդ տեղանքն անուանելիս կատարեցին պարզապէս բառացի թարգմանութիւն եւ Պարալիան վերանուանեցին Ռիպէական լեռներ: Ինչ վերաբերում է Կովկասեան լեռների անուանմանը, ապա ե՛ւ յոյները, ե՛ւ հռոմէացիները Կովկասը* (Καύκασος, Caucasus) *ի սկզբանէ կոչել են այդպէս: Աւելին՝ երբեմն Կովկաս են անուանել նաեւ ներկայիս Հինդուկուշը* (Caucasus Indicus) *եւ Պամիրը* (Paropamisus)[20]: *Չի կարելի բացառել, որ սխալը հետեւանք է հետագայ արտագրողների անուշադրութեան: Ինչպէս յայտնի է, Հեկատէոսին արտագրող Ստեփանոս Բիւզանդացին եւս ստեղծագործել է հին յունարէն, բայց չպէտք է մոռանալ, որ յունարէնն արդէն չունէր այն ազդեցութիւնն Արեւելքում, որը կար նախկինում՝ սկսած յունական մեծ գաղութացման շրջանից, իսկ առանձնապէս՝ հելլենիզմի օրօք:*

Մատիեններից անցում կատարենք տիբարենների, որոնց մասին խօսեցինք վերեւում: Հեկատէոսը վկայում է. «Տիբարենների կողքին՝ արեւածագի ուղղութեամբ, սահմանակցում են մոսսինիկները, որոնք ունեն Խէյրադի քաղաքը»[21]: Բարեբախտաբար, այս ցեղերի մասին վկայութիւններն աւելի մանրամասն են: Տիբարենների երկրի վերաբերեալ բաւականին մանրամասն, ականատեսի աչքերով խօսում է Քսենոփոնը՝ գրելով. «Այս երկրի միջով (խօսքը մոսսինոյկների երկրի մասին է – Յ. Յ.), ինչպէս թշնամական, այնպէս էլ բարեկամական հելլեններն անցան ութը կայեան եւ հասան խալիբներին: Սրանք փոքրաթիւ էին եւ հպատակւում էին մոսսինոյկներին. նրանց մեծագոյն մասի ապրուստի աղբիւրը երկաթագործութիւնն էր: Այստեղից նրանք հասան տիբարենների մօտ: Տիբարենների երկիրը առաւել դաշտային էր, եւ այնտեղ կային առափնեայ բնակավայրեր, որոնք պակաս ամրացուած էին: Զօրավարները ցանկանում էին յարձակուել այդ բնակավայրերի վրայ եւ այդպիսով զօրքի համար որեւէ բան ձեռք բերել, ուստի եւ նրանք չընդունեցին տիբարենների ուղարկած հիւրընկալման ընծաները, այլ պատուիրելով

18 **Hecateus**, fr. 282-285

19 **Л. А. Ельницкий**, *Знание древних о северных странах*, Москва, 1961, էջ 69; **А. В. Подосинов**, *Произведения Овидия как источник по истории Восточной Европы и Закавказья*, Москва, 1985, էջ 152, 159

20 Տե՛ս **Ф. Любкер**, *Иллюстрированный словарь античности*, Москва, 2005, էջ 938:

21 **Hecateus**, fr. 193

© National Library of Armenia

նրանց սպասել մինչեւ իրենց խորհրդակցելը՝ զոհեր մատուցեցին: Եւ բազում զոհաբերութիւններ կատարելուց յետոյ ի վերջոյ բոլոր գուշակները յայտարարեցին, թէ աստուածները ոչ մի դէպքում համաձայն չեն պատերազմին: Ուստի եւ նրանք ընդունեցին հիւրընկալման ընծաները եւ, երկու օր ընթանալով այդ երկրի միջով՝ իբրեւ բարեկամներ, հասան հելլենական Կոտիւորա քաղաքը, որը Սինոպի քաղաքացիների գաղութն էր տիբարենների երկրում»[22]:

Այս նկարագիրը, որ մեզ հրամցնում է վերոյիշեալ յոյն պատմիչ-զօրավարը, լիովին համընկնում է այն նկարագրին, որ հաղորդում է Ստրաբոնը՝ գրելով. «Մասամբ Վրկանաց ծովի եւ սրա ու Պոնտոսի միջեւ գտնուած ամբողջ պարանոցի հարաւում գտնւում է Հայաստանի մեծ մասը, եւ Կողքիսն ու Կապադովկիան ամբողջապէս, մինչեւ Էւքսինեան Պոնտոսը եւ տիբարենեան ցեղերը... Սրանց յաջորդում են երկրները Հալիսի միւս կողմում, որտեղ են գտնւում, առաջին հերթին, Պոնտոսի եւ Պրոպոնտոսի հարեւանութեամբ Պաֆլագոնիան, Բիւթանիան, Միւսիան եւ, այսպէս կոչուած, Հելլեսպոնտոսի Փռիւգիան, որի մի մասն է հանդիսանում Տրովադան»[23]: Աշխարհագրական քարտէզի վրայ այդ տեղանքը համապատասխանում է հ.լ. 38° հորիզոնականին եւ արեւելքից այն սահմանակից է եղել Կերասունտ քաղաքին, իսկ արեւմուտքում հասել է մինչեւ Կոտիորա քաղաքի տարածքը, որը հետագայում մտնում էր Կապադովկիա պետութեան կազմի մէջ (այստեղ էր գտնւում Եասոնի հրուանդանը)[24]: Խիստ հետաքրքիր եւ ուշագրաւ է այն, որ անտիկ հեղինակներն, իսկ առաջին հերթին՝ Քսենոփոնն ու Ստրաբոնը, տիբարենների հարցում միաբերան լրացնում են իրար: Եթէ մենք քարտէզի վրայ չափագրենք բոլոր այն տարածքները, որ վկայում է Քսենոփոնը՝ Կունաքսայից մինչեւ Կոտիորա, ապա առանց որեւէ բացառութեան այն լիովին համապատասխանում է իրականութեանը: Քսենոփոնը վկայում է. «Բաբելոնի մօտ տեղի ունեցած ճակատամարտի վայրից մինչեւ Կոտիւորա նրանց անցած ճանապարհի երկարութիւնը 122 կայեան էր՝ 620 փարսախ՝ 18600 ասպարէզ, իսկ ամբողջ ժամանակը վեց ամիս եղաւ»[25]: Հետաքրքիր է նաեւ տիբարենների եւ ոչ միայն նրանց վերաբերեալ վերջին փաստը, որ կրկին նրա երկասիրութիւնում է. «Արքային [խօսքը վերաբերում է Արտաքսերքսէս Բ-ին - Յ. Յ.]պատկանող մեր անցած երկրների տիրակալներն էին... Մեդիայինը՝ Արբակասը, փասիանների եւ հեսպերիտներինը՝ Տիրիբազոսը, իսկ կարդուխները եւ խալիւբները եւ խալդայները եւ մակրոնները եւ կոլխերը եւ մոսսինոյկները եւ կոյտոսները եւ տիբարենները ինքնավար են»[26]: Տիբարենների ինքնավարութիւնը յուշում է այն մասին, որ նրանք, ինչպէս եւ այդ կարգավիճակում գտնուող միւսները, ունեցել են զարգացման բաւականին բարձր մակարդակ: Դա էլ հանդիսացել է այն գրաւականը, որ ապահովել է նրանց անկախ կամ կիսանկախ կարգավիճակն աքեմենեան լծից: Այստեղ, մեր կարծիքով, ոչ մի նշանակութիւն չի ունեցել տարածքային հեռաւորութիւնը, ինչպէս դա, մեր կարծիքով, կոլխերի դէպքում էր, քանզի փոքրասիական-սեւծովեան տարածքն ունէր կարեւոր ռազմավարական նշանակութիւն իւրաքանչիւր նուաճողի համար: Տիբարենների վերաբե-

22 **Քսենոփոն**, *Անաբասիս*, թարգմ. Ս. Մ. Կրկեաշարեանի, Եր., 1970, V, V, 1-3

23 **Strabo**, II, IV, 31

24 Այս տեղանքի մանրամասն նկարագիրը տե՛ս **М. В. Агбунов**, *Античная лоция Чёрного моря*, Москва, 1987, էջ 48-65:

25 **Քսենոփոն**, V, V, 4

26 *Նոյն տեղում*, VII, VIII, 25

րեալ հետաքրքիր եւ բովանդակալից վկայութիւններ կան Ստրաբոնի մօտ, որտեղ պատմիչ-աշխարհագէտը նկարագրում է նրանց առնչութիւնները հայերի հետ: Ստրաբոնը նշում է. «Փառնակիա մարզի եւ Տրապիզոնի վերեւում բնակւում են տիբարենները եւ խալդէացիները (Τιβαρηνούς καί Χαλδαίους)՝ ծաւալուելով մինչեւ Փոքր Հայք: Վերջինս բաւականին արգաւանդ երկիր է: Փոքր Հայքում, ինչպէս եւ Ծոփքում մշտապէս իշխել են տեղի կառավարիչները, որոնք երբեմն պահպանում էին բարիդրացիական յարաբերութիւններ մնացեալ հայերի հետ, երբեմն անկախ էին նրանցից: Նրանց ենթակայ էին խալդէացիներն ու տիբարենները: Այնպէս որ նրանց պետութիւնը տարածւում էր մինչեւ Տրապիզոն եւ Փառնակիա»[27]: Այսպիսով, ստացւում է, որ տիբարենների երկիրը՝ Տիբարենիան, մի որոշակի ժամանակահատուած գտնուել է Փոքր Հայքի թագաւորութեան կազմում, իսկ վերջինս էլ Փոքր Ասիայի այդ հատուածում ունեցել է ելք դէպի Սեւ ծով: Այս փաստի կապակցութեամբ միւս մատենագիրները լռում են, որը խօսում է, հաւանաբար, այն հանգամանքի մասին, որ այդ ելքը եղել է խիստ կարճատեւ ժամանակով եւ այս չրջանում էլ հէնց Փոքր Հայքը հասել է՛իր հզօրութեան գագաթնակէտին: Դրանից յետոյ Փոքր Հայքի մասին վկայութիւններն ընդհատւում են, եւ Ստրաբոնը միայն վկայում է այն մասին, թէ ինչպէս Փոքր Հայքը նուաճուել է պոնտացի Միհրդատ Զ Եւպատորի (Ք.ա. 111-63 թթ.) կողմից նրա գահակալութեան սկզբին: Այդ ժամանակ Մեծ Հայքի եւ Պոնտոսի թագաւորութիւնների միջեւ սահմանագիծն անցել է սահմանային Սինորիա (Սիւնորիա) ամրոցով, որը կառուցել էր Միհրդատը: Այս ամրոցի ստոյգ տեղն առայժմ անյայտ է[28], բայց ընդունուած է այն տեղադրել ներկայիս Թուրքիայում գտնուող Սազակ քաղաքի տեղում:

Ինչպէս իր հետագայ շարադրանքում վկայում է Հեկատէոսը, տիբարենների հարեւանութեամբ տեղակայուած են եղել խալիբները. «Խալիբներ, ժողովուրդ Պոնտոսի մօտ, Թերմոդոնտես գետի վրայ: Խալիբներին հարաւից սահմանակցում են հայերը»[29]: Խալիբ անուանումը նրանք ստացել են շնորհիւ իրենց հիմնական զբաղուածութեան (աշխատանքի), քանզի ձուլել են պղինձ (Χαλκοπλάστης χαλκέυς, լատ.՝ faber aerarium): Ինչպէս պարզաբանում է Քսենոփոնը (նկարագրելով 10.000 յոյների նահանջը), երբ զրուցել են կոմարքոսի հետ, ապա պարզուել է, որ հարեւան երկիրը. դա խալիբների հանգրուանն էր[30], որը համընկնում էր խալդէացիների երկրի հետ: Խալդէացի-խալիբների մասին խօսում են ոչ միայն պատմիչները, այլ նաեւ անտիկ թատերգակ Էսքիլէսը (Ք.ա. 525-456 թթ.): Երբ նա անդրադառնում է մերձսեւծովեան տափաստանների սկիւթներին, ապա գրում է. «...Կովկաս գնացողի համար ձախ կողմից տարածքը զբաղեցնում են խալիբները, որոնք երկաթ են մշակում»[31]:

Ամէն ինչ կը լինէր բացայայտ պարզ, եթէ չլինէր Ստրաբոնի վկայութիւններից մէկը: Խալիբ-խալդէյների գոյութեան մա-

28 Տե՛ս *նոյն տեղում*:

29 **Hecateus**, fr. 195 (F. Jacoby, 203)

30 Տե՛ս Քսենոփոն IV, V, 34. Նաեւ՝ IV, III, 4. IV, IV, 18. V, V, 17...

31 **В. В. Латышев**, *Известия...*, ВДИ, 1947, N 1, էջ 303, 305. **J. Markwart**, *Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen*, Wien, 1930, էջ 229-230. **Б. Б. Пиотровский**, *Урарту*, Ереван, 1944, էջ 328. **Ց. Մանանդեան**, *Երկեր*, հտ. Ա, Եր., 1977, էջ 68-69

27 **Strabo**, XII, III, 28: Այս հարցերին նոյնիսկ անդրադարձել է Ի. Նիւտոնը: Տե՛ս **И. Ньютон**, *Хронология древних царств*, Москва, 2007, էջ 278, 300, 302 եւ յաջ.:

© National Library of Armenia

սին Հայաստանում նա յիշատակում է՝ Քրիստոսից առաջ II դարի սկզբներին տեղի ունեցած դէպքերի հետ կապուած: Երբ Արտաշէսը վերամիաւորում էր հայկական տարածքները, ապա այդ ցեղերից, ինչպէս նաեւ մոսսինոյկներից նա յետ է վերցրել Կարինը եւ Դերքսենեն կամ Դերջանը (Καρηνίτιν καί Δερξήνην), որոնք գտնւում են Բարձր Հայք նահանգի տարածքում եւ, ինչպէս ընդգծում է պատմիչը, սահմանակցել են Փոքր Հայքին: Այս վկայութիւնը, մեր կարծիքով, չի համապատասխանում իրականութեանը: Եթէ շարժուենք ստրաբոնեան տրամաբանութեանը համապատասխան, ապա նա խալիբ-խալդէացիներին տեղակայում է համարեա ամէնուր՝ Բաբելոնում, Կապադովկիայում, Պոնտոսում... Հաւանաբար պատմիչը կա՛մ չի իմացել այդ ցեղերի անուանակոչութեան նախնական իմաստը, որը քիչ հաւանական է, կա՛մ էլ դրան չի տուել որեւէ նշանակութիւն, ուստի եւ խուսափել է պարզաբանումներից: Այսպէս, բաբելոնեան խալդէյ-խալիբները Քրիստոսից առաջ I հազարամեակի կէսերին (626-539 թթ.) գերիշխող դիրք ձեռք բերեցին Առաջաւոր Ասիայում, երբ հիմնեցին Նոր Բաբելոնեան թագաւորութիւնը, որի հիմնական պատճառը արտադրութիւնում երկաթի մասսայական օգտագործումն էր: Այս ասպարէզում նրանք հանդիսացան Նոր Ասորեստանեան պետութեան բնակչութեան (X-VII դդ.) գործի շարունակողները, որոնք եւս ամէնուր մասսայաբար օգտագործեցին երկաթը՝ դառնալով առաջին համաշխարհային կայսրութեան ստեղծողները:

Այսքանով կարելի կը լինէր բաւարարուել եւ վերջակէտ դնել խնդրի արծարծմանը, եթէ հրապարակում չլինէր Պլինիոս Աւագի մի վկայութիւն եւս. «Թասիսի (Thasis) եւ Թրիարիէի (Thriarie) տարածքները հասնում են մինչեւ Պարիադրէսի լեռները, որից այն կողմ Կոլխիդայի անապատներն են (՞): Այս տեղանքի հարեւանութեամբ, դէպի կերաունացիները, ապրում են արմէնոխալիբները (armenochalybes), եւ մոսխերի տարածքն է, մինչեւ Կուրի վտակ Հիբերոսը (Hiberos): Այնուհետեւ ապրում են մակրոնները, եւ Աբսարգետն է»[32]: Թէ որտեղ են գտնւում Պարիադրէսի լեռները, եւ որտեղ է տեղակայուած Կոլխիդան, դա աքսիոմայ է եւ յայտնի իւրաքանչիւրին: Ինչ վերաբերում է կերաունացիներին, ապա հաւանաբար, պատմիչն այստեղ նկատի ունի այն ցեղերին, որոնք բնակուել են Կովկասի հարաւային լանջերին, քանզի հնագոյն ժամանակներից ընդունուած էր լանջերի այդ մասն անուանել τά Κεραυνία όρη: Մեր կարծիքով, սխալւում է Ֆ. Լիւբկերը, երբ Կերաւնեան է կոչում այդ լեռների միայն հիւսիսարեւելեան ճիւղը, որոնք ձգւում են Կասպից ծովի արեւմտեան ափի երկայնքով[33]: Ինչ վերաբերում է մակերոն-մակրոններին, ապա նրանց վերաբերեալ յիշատակում են հին յունական պատմիչներից շատերը (Հեկատէոս, Հերոդոտոս, Ստրաբոն, Դիոդորոս), եւ բացառութիւն է կազմում Քսենոփոնը: Վերոյիշեալ բոլոր պատմիչները, սկսած Հեկատէոսից, միաբերան պնդում են, որ մակերոն-մակրոնները նոյն սաններն են, որոնք ապրել են մոսխերի եւ կոլխերի միջեւ: Այժմ եւս նրանք զբաղեցնում են այդ տարածքը Աջարիայում՝ բնակուելով Սարպի գիւղում՝ Սեւ ծովի ափին, վրաց-թուրքական սահմանի անմիջական հարեւանութեամբ: Այս վերլուծութիւնը բերում է այն եզրայանգման, որ, փաստօրէն, արմէնոխալիբների զբաղեցրած այն տարածքը, որ տալիս է Պտղոմէոսը, համընկնում է խալիբների մասին այն վկայութիւնների հետ, որ մենք քաղում ենք Ստրաբոնից:

32 **Plinii Secundii** *Naturalis historiae* (LCL), Camb., Mass.-L, 1950-1962, VI, II, 29

33 Տե՛ս **Ф. Любкер**, *նշ. աշխ.*, էջ 502:

Այսպիսով, սկզբնաղբիւրներում մենք վկայութիւններ ունենք խալիբ-խալդէացիների եւ արմէնոխալիբների մասին: Ակնյայտ է, որ նրանք այդպէս միանման կոչուել են շնորհիւ իրենց ունեցած զբաղմունքի: Փորձենք բացել փակագծերը: Մերձասեւծովեան խալիբների եւ Բարձր Հայքում բնակուող խալիբների միջեւ ընկած է Մեծ Հայքի Սպեր գաւառը, որը հնագոյն ժամանակներից յայտնի է եղել իր ոսկու հանքերով: Հաւանաբար, այստեղ եղել են նաեւ պղնձի փոքր պաշարներ, որն արդիւնահանուել է ոսկու հետ: Այս ամէնի կողքին չպէտք է մոռանալ, որ նկարագրուող ժամանակաշրջանում Հայաստանն արդէն անցում էր կատարել բրոնզից երկաթին (նկարագրուող ժամանակից ամենաքիչը 300-400 տարի առաջ): Խալիբներն, անկասկած արդէն իրազեկ էին երկաթի գոյութեան մասին, բայց նրանց այդպէս շարունակել են անուանել աւանդոյթի ազդեցութեան ներքոյ:

Իր Նկարագրի յաջորդ հատուածում Հեկատէոսը խօսում է Ստամենա քաղաքի վերաբերեալ, որը գտնուել է խալիբների տարածքում[34]: Մենք, փաստօրէն պարզեցինք խալիբների բնակութեան տարածքները, եւ մնում է գտնել, թէ որտեղ է եղել վերոյիշեալ Ստամենան: Մեծ Հայքի թագաւորութեան ուրբանիզացիայի քարտէզը, այդ թւում նաեւ՝ նրա հիւսիսարեւելեան ծայրամասի, մեզ յայտնի է շնորհիւ Պտղոմէոսի: Նրան հերքելով՝ Ջ. Թոմսոնը գտնում է, որ անտիկ պատմիչը սխալւում է, երբ յիշատակում է հայաստանեան 84 քաղաքների անուններ[35]: Մեծ Հայքի թագաւորութեան արեւմտեան նահանգների քաղաքներին Պտղոմէոսն անդրադառնում է §§ 14-17 եւ 19-ում: Առաջին հատուածում Ս տառով են սկսւում Սանա քաղաքը, որը գտնուել է 73° 50′, 42°, Սոգոկարան, որն ունեցել է 74° 41′ տեղադրութիւն, Սիգուան՝ 77°, 41′, Սագաւանան՝ 75° 15′, 40° 45′, իսկ § 19-ում յիշատակւում են Սոէյտան՝ 72° 50′, 39° 30′ եւ Սելտիան՝ 74° 40′[36]:

Այսպիսով, ծագում է այն միակ հարցը, թէ որտե՞ղ պէտք է որոնել Ստամենան: Քաղաքները, որ յիշատակւում են §§ 14-17-ում, պատմիչը տեղակայում է Մեծ Հայքի Բասիլիսենա, Օբորդենա, Ակիլիսենա, Հաշտեանք եւ Մոփք վարչա-տարածքային միաւորների տարածքներում, այսինքն՝ նրա հիւսիսային եւ արեւմտեան շրջաններում: Ինչ վերաբերում է § 19-ում յիշատակուած քաղաքներին, ապա դրանք գտնուել են Անձիտի, Տոսպիտիսի եւ Կորիայայի տարածքներում[37]: Այսպիսով, § 19-ում նկարագրուած է հիմնականում Մեծ Հայքի հարաւարեւմտեան ծայրամասերը՝ Վանայ լիճն իր յարակից շրջաններով: Այս երկուսի՝ հարաւ-արեւմուտքի եւ հիւսիսային եւ արեւմտեան տարածքների միջեւ միջանկեալ դիրք ունի Մոփքը, որը կարելի է ընդգրկել ե՛ւ մէկի, ե՛ւ միւսի մէջ: Այս վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ Ստամենան չպէտք է որոնել § 19-ում յիշատակուած տարածքում, քանզի մեր կողմից արդէն բացայայտուել է, որ խալիբները հանգրուանել են Կարինի տարածքում կամ նրան շատ մօտ, որը գտնուել է Մեծ Հայքի հիւսիս-արեւմուտքում: Այս տարածքի մասին, ինչպէս տեսանք, Պտղոմէոսը յիշատակում էր §§ 14-17-ում, որտեղ եւս ընդգրկուած է բաւականին մեծ տարածք: Բասիլիսենան՝ դա Այրարատն է, որտեղ էլ գտնուել են Ուրարտուի, ապա նաեւ Երուանդունի, Արտաշիսեան եւ Արշակունի

34 **Hecateus**, fr. 196 (F. Jacoby, 202): Տե՛ս նաեւ **Stephani Byzantii**, *Ստամենա*, *Խալիբ* յօդուածները:

35 Տե՛ս *Claudii Ptolomaei Geography*, ed. **C. Müller**, Parisiis, 1901, V,13, §§ 1-22, տե՛ս նաեւ **Дж. О. Томсон**, *История древней географии*, Москва, 1953, էջ 404-405:

36 Տե՛ս **Ptol**, V, 13, §§ 14-17, 19:

37 *Նույն տեղում*, V,13, §§ 13, 18

© National Library of Armenia

արքաների նստավայրերը: Պատմիչն Այրարատից, որը Մեծ Հայքի կենտրոնում էր, անցում է կատարում հիւսիս-արեւմուտքին՝ Ակիլիսենէին եւ Կարինին, ապա սրանցից հարաւ-արեւելք ընկած Հաշտեանքին:

Հարցի այսպիսի արծարծումից անցում կատարենք Ստամենայի տեղադրութեան խնդրին: Եթէ համեմատական վերլուծութեան ենթարկենք Հեկատէոսի եւ Պտղոմէոսի վկայութիւնները, ապա հնչիւնաբանօրէն Ստամենային մօտ են Սագաւանա եւ Սոգոկարա անունները: Հաւանաբար, Ստամենան ծագում է յունարէն stamen-ից, որն իր հերթին istemi բառի փոխուած տարբերակն է եւ ունի բազմաթիւ իմաստներ՝ տեղադրել, տեղակայել, ամրացնել, ամրապնդել...[38]: Թարգմանութեան այսպիսի բազմազանութիւնը առիթ է տալիս Ստամենա տեղանուան երկակի բացատրութեան: Կարելի է ենթադրել, որ այս քաղաքն ունեցել է հզօր պաշտպանական ամրութիւններ եւ անհասանելի է եղել արտաքին հակառակորդների համար: Երկրորդ՝ կարելի է ենթադրել, որ այս տեղանունը իմաստաբանօրէն պէտք է կապել այն գերազանցութեան հետ, որ ունեցել են նրա հիմնադիր խալիբները, ի տարբերութիւն իրենց հարեւանների: Նրանք էին, որ առաջիններից մէկը, եթէ ոչ առաջինը, ստացան ոչ միայն երկաթը, այլեւ սկսեցին ձուլել պողպատ: Այս մասին են վկայում Հերոդոտոսը, Քսենոփոնը եւ գրող Էսքիլէսը: Չի կարելի նաեւ բացառել, որ խալիբ անունը կամ մականունը նրանք ստացել են պողպատաձուլութեամբ զբաղուելուց յետոյ: Սա նշում ենք այն պատճառով, քանզի խալիբ բառապաշարային կամ լեքսիկական միաւորն ունի յունական ծագում՝ բխելով պողպատ բառից: Հաւանաբար այս գերազանցութիւններն էլ, այն է՝ նախ երկաթի, ապա նաեւ պողպատի, եղել են փոխանուանական անուանակոչման հիմնական պատճառը՝ Ստամենա քաղաքի խնդրում:

Հեկատէոսին՝ Պտղոմէոսից բաժանում է ամենաքիչը 560 տարի, եւ չի բացառուում, որ այդ երկարատեւ պատմական ժամանակահատուածի ընթացքում, պատմական բազմաթիւ իրադարձութիւնների յորձանուտում Ստամենան ձեւափոխուել է Սագովանայի կամ էլ Սոգոկարայի: Մեզ առաւել հաւանական է թւում առաջին տեղանունը, քանզի իրար նման են նաեւ վերջաւորութիւնները:

Այժմ մեզ անհրաժեշտ է քննարկել մոսսինոյկների զբաղեցրած տեղանքի խնդիրը: Նրանց կապակցութեամբ Հեկատէոսի յայտնած վկայութիւններն, ի տարբերութիւն նախորդների, խիստ խճճուած են: Այսպէս, 192-րդ հատուածում նա գրում է. «Մարեր, ժողովուրդ մոսսինոյկների հարեւանութեամբ, Ասիայի նկարագրութիւնում»[39]: Առաջին հայեացքից ամէն ինչ թւում է պարզ եւ հասարակ, առաւել եւս, որ մարերի վերաբերեալ յիշատակում է նաեւ Հերոդոտոսը[40]: Ինչ վերաբերում է մոսսինոյկներին, ապա Հերոդոտոսից զատ, նրանց վերաբերեալ յիշատակում են նաեւ Քսենոփոնը եւ Ստրաբոնը[41]: Ամէն ինչ կը լինէր միանգամայն պարզ եւ հասկանալի, եթէ չլինէր Հեկատէոսի հետեւեալ վկայութիւնը. «Խէյրադի, մոսսինոյկների քաղաքը Եւրոպայում (Ասիայում՞): Տիբարեններին արեւածագի ուղղութեամբ սահմանակցում են մոսսինոյկները, որոնց մօտ է

39 **Hecateus**, fr. 192 (F. Jacoby, 205)

40 Հերոդոտոս, III, 24, VII, 79

41 Տե՛ս *նույն տեղում*, III, 94, VII, 78, նաեւ՝ Քսենոփոն, V, IV, 9-34, VII, VIII, 25, **Strabo**, XI, XIV, 5, XII, III, 18: Ստրաբոնը նրանց անուանում է նաեւ հեպտակոմիտներ, որը, նրա իսկ բացատրութեամբ համաձայն, նշանակում է *աշտարակ:*

38 Տե՛ս **И. Х. Дворецкий**, *Древнегреческо-русский словарь*, том I, Москва, 1958, էջ 838:

գտնուում Խէյրադի քաղաքը»[42]: Խնդրի վերլուծումն ու պարզաբանումն սկսենք ամենավերջից՝ Խէյրադի քաղաքից: Այս քաղաքը եւս պէտք է փնտրել այնտեղ, որտեղ մենք փնտրեցինք Սագաւանան: Դժբախտաբար, մոսսինոյկների այս քաղաքի կապակցութեամբ, այդ հարցերի լաւագոյն գիտակ եւ մեր հիմնական սկզբնաղբիւր հանդիսացող Պտղոմէոսը ոչինչ չի հաղորդում: Զկայ գէթ մէկ անուն, որը հնչիւնաբանօրէն նման լինէր Խէյրադիին: Այս քաղաքի վերաբերեալ ոչինչ չի նշում նաեւ Պտղոմէոսին նախորդած Պլինիոս Աւագը, որը յիշատակում է հին Հայաստանի ամենանշանաւոր քաղաքները՝ Արտաշատը, Արմաւիրը, Տիգրանակերտը, Արշամաշատը, Կարկաթիոկերտը...: Այս անգամ եւս դիմելով պատմական լեզուաբանութեան օգնութեանը՝ կարելի է կատարել որոշակի ենթադրութիւններ: Այսպէս, Խէյրադի տեղանունը, մեր կարծիքով, հաւանաբար կապուած է հին յունական χείρ (χείρος) բառի հետ, որը նշանակում է ձեռք: Կարելի է ենթադրել նաեւ, որ այդ անունը ծագում է χερσμός բառից, որը թարգմանւում է ղեկավարել, առաջնորդել[43]: Այսպիսով, ընդհանրացնելով վերեւում ասուածը՝ կարելի է անել այն հետեւութիւնը, որ Խէյրադին կամ արհեստաւորների, հմուտ ձեռքեր ունեցող մարդկանց քաղաք էր կամ էլ մոսսինոյկների գլխաւոր քաղաքն էր, այսինքն՝ մայրաքաղաքը: Ինչ վերաբերում է Եւրոպա-Ասիա խառնաշփոթին, ապա այստեղ ամէն ինչ առաւել քան պարզ է: Ինչպէս տեսանք վերեւում, նոյն Ստրաբոնը խալդէյ-խալիբներին բաժանում էր երկու մասի՝ բաբելոնեան եւ փոքրասիական (Կապադովկիան): Չպէտք է զանց առնել, որ մոսսինոյկների մի մասը տեղափոխուել է Եւրոպա, որից էլ հետեւում է այդտեղ նրանց յիշատակելու խնդիրը: Խնդիրն այն է, որ հեկատէոսեան դարաշրջանը չպէտք է դիտարկել նախորդ եւ հետագայ դարաշրջաններից անկապ կամ էլ քարացած եւ անփոփոխ վիճակում: Ուստի չպէտք է մոռանալ, որ հեկատէոսեանին նախորդել է կիմերա-սկիւթական ներխուժումների ժամանակաշրջանն Այսրկովկաս եւ հայկական լեռնաշխարհ, որը եւ պատճառ է դարձել ցեղային նոր տեղաշարժերի:

Իսկ ի՞նչ տարբերութիւն կայ այս երկու ներխուժումների միջեւ: Կիմերացիները բրոնզեայ մշակոյթի կրողներ էին, իսկ սկիւթները «...կեանքի բոլոր ասպարէզներում իւրացրել էին երկաթը եւ այն օգտագործում էին, որպէս հիմնական մետաղ, ե՛ւ աշխատանքի գործիքներ, ե՛ւ զէնք պատրաստելիս»[44]:

Ինչպէս հաւաստիօրէն պարզաբանուած է այժմ, հայկական լեռնաշխարհում անցումը բրոնզից երկաթին սկսուել է Քրիստոսից առաջ II-I հազարամեակների սահմանագլխին: Բայց սա երբեք չի նշանակում, որ այդ անցումը եղել է ակնթարթօրէն, մոգական գաւազանի մէկ հարուածի օգնութեամբ: Երկաթի լիակատար իւրացման համար դեռեւս անհրաժեշտ էր գոնէ 2-3 դար ժամանակ, որն էլ ժամանակագրական առումով համարեա համընկնում է կիմերա-սկիւթական ներխուժման հետ Այսրկովկաս, իսկ մասնաւորապէս՝ հայկական լեռնաշխարհի տարածքը: Կիմերները, զիջելով տեղաբնիկ հայկական ցեղերին, որոնք երկաթն արդէն իւրացրել էին, նահանջեցին արեւմուտք՝ դէպի Կապադովկիա, իսկ սկիւթների մի մասը, լինելով կենսունակ, մնաց այստեղ: Նրանք հանդուրեան գտան լեռնաշխարհի հիւսիսարեւմտեան ծայրամասում: Այն փաստի օգտին,

42 **Hecateus**, fr. 193 (F. Jacoby, 204)

43 Տե՛ս **И. Х. Дворецкий**, *Древнегреческо-русский словарь*, том II, Москва, 1958, էջ 1769-1770:

44 **В. И. Гуляев**, *Скифы. Расцвет и падение великого царства*, Москва, 2005, էջ 124

© National Library of Armenia

որ սկիւթները տարածուած են եղել համարեա ողջ օյկումենի տարածքում, խօսում է թէկուզեւ այն հանգամանքը, որ սկիւթական դամբարաններ են յայտնաբերուել ներկայիս Գերմանիայի եւ Հունգարիայի տարածքներից սկսած, մինչեւ Ալթայ եւ հիւսիսային Մոնղոլիա[45]: Այս փաստը միաժամանակ ապացուցում է նաեւ, որ ոչ բոլոր սկիւթական ցեղերն են ունեցել երկաթ: Կենսունակ եւ մրցակցութեանը դիմակայող հանդիսացան երկաթ ունեցողները, իսկ միւսներն Այսրկովկասից պարզապէս հեռացան:

Այժմ վերադառնանք մոսսինոյկներին եւ խալիբ-խալդայներին: Ինչպէս ժամանակին վերջիններիս մի մասը հեռացաւ իր տարածքից, որ հետագայում կատարեցին նաեւ նեբթափանցած սկիւթները, այնպէս էլ նոյնն իրականացրին մոսսինոյկների մի հատուածը, որոնք երեւի իրազեկ չէին երկաթին:

Մոսսինոյկների հետ առնչուող բոլոր հիմնահարցերը կարելի է վերականգնել շնորհիւ Քսենոփոնի Անաբասիսի*: Համաձայն պատմչի՝ երբ 10.000 յոյները նահանջել են, ապա նրանք հանգրուան են գտել մոսսինոյկների երկրում, որոնց արեւելքից սահմանակից էին մակրոնները, իսկ արեւմուտքում բնակւում էին խալիբները: Իր հետագայ շարադրանքում պատմիչը նաեւ ընդգծում է, որ հէնց մոսսինոյկների միջեւ փոխյարաբերութիւնները թշնամական էին. «Այնժամ Տիմեսիթէոսը յայտնեց հելլէններին, թէ այն կողմում բնակուող մոսսինոյկները թշնամի են այս մոսսինոյկներին»[46]: Յոյները, յանուն իրենց յաջողութեան, որպէսզի կարողանան ապահով նահանջել, հաշտեցրել են մոսսինոյկների այդ երկու հատուածներին: Սակայն այդ հաշտեցումը եղել է կարճատեւ: Վերջինիս մասին է յուշում թէկուզեւ այն հանգամանքը, որ երբ Ք.ա. II դարի սկզբներին Արտաշէս Ա-ը սկսեց վերականգնել Մեծ Հայքի թագաւորութեան տարածքային ամբողջականութիւնը, ապա վերամիաւորուած Դերջանում ապրել են մոսսինոյկները: Դա իր հերթին նշանակում էր, որ մոսսինոյկների պարտուած մասը հեռացել է նախկինում զբաղեցրած տարածքներից եւ տեղափոխուել Մեծ Հայքի կազմում գտնուած Բարձր Հայք նահանգի տարածքը:*

Իր հետագայ շարադրանքում Հեկատէոսը մերձսեւծովեան տարածքներից տեղափոխւում է արեւելք՝ նկարագրելով սահմանը Հայաստանի եւ Կողքիսի միջեւ: Այս հարցի լուսաբանման կապակցութեամբ ուշադրաւ է Հեկատէոսի 190-րդ հատուածում յայտնած վկայութիւնը, որտեղ նա նշում է. «Խոյ, ժողովուրդ վեխիրների հարեւանութեամբ, Ասիայի նկարագրութիւնում: Մինչեւ այժմ էլ մնում է որպէս բեխիրների երկիր, որոնց կողքին եւ հարեւանութեամբ ապրում են խոյերը: Խոյերին արեւելքից հարեւան են դիզիրները»[47]: Առաջին հայեացքից թւում է, թէ Հեկատէոսն ուղղակի սխալւում է, իրար հետ է շփոթում խոյ անուամբ ժողովրդին եւ Խոյ վարչա-տարածքային միաւորը: Հեկատէոսից յետոյ առաջին անգամ Խոյի մասին կրկին խօսում է 19 դար անց իսպանացի ճանապարհորդ Ռուի Գոնսալես դէ Կլաւիխոն (Ք.յ. XIV դ.). «Յաջորդ օրը՝ հինգշաբթի, յունիսի 5-ին, կէսօրին մօտ եկանք մի քաղաք, որ կոչւում էր Խոյ: Այն տեղակայուած էր հարթավայրում՝ շրջապատուած բազմաթիւ այգիներով եւ մշակուած դաշտերով: ...Այստեղից, այս քաղաքից սկսած, սկիզբ է առնում Վերին Հայաստանը, եւ սկսւում է նաեւ Պարս-

45 Աւելի մանրամասն տե՛ս **Т. Т. Райс**, *Скифы. Строители степных пирамид*, Москва, 2004, էջ 212-215 (приложение I, главные захоронения скифов и родственных им кочевых племён):

46 **Քսենոփոն**, V, IV, 3

47 **Hecateus**, fr. 190 (F. Jacoby, 200)

կաստանը: Այս քաղաքում ապրում են մեծաթիւ հայեր»[48]: Դէ Կլաւիխոն խօսում է հին հայկական Հեր գաւառի մասին, որն իսպանացի այս ճանապարհորդի ժամանակ արդէն ստացել էր Խոյ անուանումը: Բայց, հազիւ թէ Հեկատէոսն այսպիսի մանրամասնութեամբ իմանար հին Հայաստանի հարաւարեւելեան սահմանը, եւ քանի որ նրա կողմից յայտնած՝ Երուանդունիներին առնչուող վկայութիւնների առիւծի բաժինը վերաբերում է Հայաստանի հակառակ եզրին՝ հիւսիս-արեւմուտքին, ապա այդ Խոյը եւս անհրաժեշտ է փնտրել այստեղ: Խոյերի մասին հեկատէոսեան նկարագիրը տարածքային առումով համընկնում է տաոխների երկրի հետ: Վերջիններիս մասին չորս անգամ վկայում է Քսենոփոնը իր Անաբասիսում*: Համաձայն վերջինիս՝ նրանք ապրել են ֆասիանների հարեւանութեամբ եւ 10.000-ի նահանջի ընթացքում անցնելով տաոխների երկրով՝ յոյն վարձկաններն այնուհետեւ դուրս են եկել սկիւթ-խալդէյների տարածք: «Այստեղից նրանք գնացին դէպի տաոխները հինգ կայեան՝ երեսուն եւ հինգ փարսախ, եւ նրանց պարէնը սպառուեց. քանզի տաոխներն ապրում էին ամրացուած վայրերում, որտեղ եւ փոխադրել էին իրենց ամբողջ պարէնամթերքը: Երբ (հելլէնները) հպատան մի վայր, որը քաղաք չէր, եւ որտեղ տներ էլ չկային, բայց ուր հաւաքուել էին այրեր եւ կանայք եւ շատ անասուններ, խէյրիսիոսը, առանց սպասելու, իսկոյն յարձակուեց նրանց վրայ. եւ երբ առաջին ջոկատը յոգնեց, միւսը անցաւ յարձակման. յետոյ մէկ ուրիշը, քանզի անհնար էր ի մի հաւաքուելով այն պաշարել, շուրջանակի գահավէժ վայրում էր այն գտնւում»[49]:*

Տեղանքի այս նկարագրութիւնը, մեր կարծիքով, հիմնովին համապատասխանում է հայկական Տայք նահանգի տեղադրութեանը, որի հիւսիս-արեւմուտքում գտնւում են Պարիադրէսի (Պարխարեան) լեռները: Հին եւ միջնադարեան հայոց պատմութիւնից քաջ յայտնի է, որ օտար նուաճողների դէմ պայքարում, մեր նախնիները քանիցս աշխատել են ռազմական գործողութիւնները տեղափոխել հէնց Տայք, որն ունէր անմատչելի լեռներ եւ խիտ անտառներ: Հետագայ շարադրանքում Քսենոփոնը խօսում է հէնց այդ մասին՝ նկարագրելով այն բոլոր տանջանքներն ու զրկանքները, որ իրենք տեսել են այդ տարածքում: Տաոխների երկրի եւ սկիւթ-խալդէյների երկրների միջեւ սահմանագիծ էր հանդիսանում Արպասոս կամ ներկայիս Ճորոխ գետը[50]:

Իսկ ինչո՞ւ պէտք է տաոխների երկիրը տեղադրենք ուշ ստրկատիրական կամ վաղֆէոդալական դարաշրջանների Տայք նահանգում: Այս տարածքն ուրարտական արձանագրութիւններում (Մենուայի, Արգիշտի Ա-ի եւ յաջորդ թագաւորների), յայտնի է որպէս Դիաուխի երկիր, որն այժմ անհերքելիօրէն ապացուցուած է[51]: Դիաուխի անունից է ծագում նաեւ Տայք նահանգի անունը, որը Քսենոփոնի մօտ ձեւափոխուել է Տաո[խ]-ի, իսկ նրա նախորդողների մօտ եղել է Խոյ: Հին վրացական աղբիւրներում այս սահմանային նահանգը առաւել յայտնի է Տաո-Կլարջետի

48 **Руи Гонсалес де Клавихо**, *Дневник путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406)*, пер. со староиспанского И. С. Марковой, Москва, 1990, էջ 75-76

49 **Քսենոփոն**, IV, VII, 1-2

50 Տե՛ս *նոյն տեղում*, IV, VII, 18. նաեւ՝ **В. И. Гуляев**, *Скифы. Расцвет и падение великого царства*, Москва, 2005, էջ 128-158:

51 Մանրամասն տե՛ս **Г. А. Меликишвили**, *նշ. աշխ.*, passim, նոյնի՝ *Диаухи*, ВДИ, 1950, N 4, էջ 26-42. **Н. В. Арутюнян**, *Топонимика Урарту*, Ер., 1985, էջ 73. նոյնի՝ *Корпус...*, passim, **Б. Б. Пиотровский**, *О происхождении армянского народа*, Ер., 1946, էջ 8 եւ յաջ. **П. Н. Ушаков**, *К походам урартийцев в Закавказье*, ВДИ, 1946, N 2, էջ 22. **Ց. Մանանդյան**, *Երկեր*, հտ. Ա, էջ 77 եւ յաջ.:

© National Library of Armenia

անուամբ[52]: Եթէ յոյների մօտ առաւել ընդունուած էր Ταέις ձեւը, ապա Ք.ա. I դարի պատմիչ Դիոդորոս Սիկիլիացու վկայութիւնները հակասում են դրան: Նա եւս բաւականին հանգամանօրէն կանգ է առել 10.000 յոյների նահանջի նկարագրին եւ, փաստօրէն, պարզապէս կրկնելով Քսենոփոնին, վերոյիշեալ տարածքն անուանում է Խայոյ՝ գրելով. «...այստեղ չորս օր անցկացնելուց յետոյ իրենց ճանապարհը շարունակեցին (խօսքը յոյների մասին է – Յ. Յ.) խայոյների եւ փասիանների երկրի միջով: Երբ տեղաբնիկները յարձակուեցին հելլէնների վրայ, սրանց կուում յաղթելով շատերին սպանեցին եւ, գրաւելով տեղաբնիկների տները, որոնք լեցուն էին բարիքներով, այնտեղ մնացին տասնհինգ օր»[53]:

Տաոխների երկրից մինչեւ Տրապիզոն քաղաքն ընկած ճանապարհի վրայ է գտնուում, համաձայն Քսենոփոնի, Գիւմնիաս քաղաքը, որտեղից էլ սկիզբ է առնում Արպաս գետը: Այս տեղանքն ամբողջովին համապատասխանում է Սպեր գաւառի գտնուելու տարածքին: Սպերի՝ Հայաստանի անբաժանելի մաս լինելու վերաբերեալ երկիցս յիշատակում է Ստրաբոնը[54]: Գիւմնիասի մասին հպանցիկ խօսում է նաեւ Դիոդորոսը[55], սակայն այս բնակավայրի մասին ոչինչ չգիտեն Հեկատէոսը եւ միւս անտիկ հեղինակները: Առաջին հայեացքից դա չի կարող տեղիք տալ կասկածանքների, բայց երբ Գիւմնիասի մասին լռում են նաեւ Պլինիոս Աւագը, իսկ առաւել եւս Պտղոմէոսը, ապա այս ամէնը հարկադրում է իսկապէս մտորել: Մեր կարծիքով, նախ եւ առաջ, սա խօսում է այն մասին, որ իր շարադրանքի գոնէ այս հատուածում Դիոդորոսը կախուածութեան մէջ է Քսենոփոնից: Երկրորդ՝ այդ բնակավայրը ծագել եւ առաջացել է մի ինչ-որ անապատային, մեկուսացուած տարածքում եւ պատմական թատերաբեմի վրայ երկար չի մնացել: Երրորդ՝ եթէ կատարենք ծագումնաբանական վերլուծութիւն, ապա Գիւմնիաս անունը ծագում է յունարէն γυμνής այսինքն՝ թեթեւազէն բառից, իսկ γυμνός անուանել են մերկ, բացարձակապէս չորազուրկ մարդուն[56]: Հին յունարէնում ամազոնուհի բառը հոմանիշ է թեթեւազէնին: Այսպիսով, տալ վերջնական եւ համոզիչ պատասխան այն հարցին, թէ ովքեր են բնակուել Գիւմնիաս քաղաքում, առայժմ անհնարին է աղբիւրների սղութեան պատճառով[57]: Չի կարելի բացառել նաեւ, որ Գիւմնիասը եղել է Այսրկովկաս, այդ թւում նաեւ՝ Հայաստան ներխուժած սկիւթական ցեղախմբերից մէկի ժամանակաւոր կացարանը: Անաբասիսի ռուսերէն եւ հայերէն թարգմանութիւններն իրականացրած հեղինակները՝ Ս. Յ. Լուրիէն, Մ. Ի. Մաքսիմովան. Ս. Ի. Սոբոլեւսկին եւ Ս. Մ. Կրկեաշարեանը իրաւացիօրէն քննադատում են Յ. Մանանդեանին, քանզի վերջինս Գիւմնիասը նոյնացնում է Գիւմրի (նախկին Լենինական) քաղաքի հետ:

52 Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բէկ**, *Վրացական աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. I, Եր., 1934, էջ 12, 44, 68-69, 105, 137 եւ յաջ.:

53 *Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. 14. **Դիոդորոս Սիկիլիացի**, XIV, 29, 1. տե՛ս նաեւ *Diodori Biblioteca Historica*, ex. recens. L. Dindoritii, v. I-V, Lipsiae, 1866-1668, XIV, 29,1:

54 **Strabo**, XI,IV,8, XI, XIV, 12: Ստրաբոնի ռուսերէն թարգմանութիւնում Գ. Ա. Ստրատոնովսկին սխալւում է, երբ ծանօթագրութիւնում նշում է, որ Սուսպիրիտիսը (Συσπιρίτις) քաղաք է, եւ անորոշ աւելացնում՝ Ասիայում: Տե՛ս **Страбон**, *География*, М., 1994, էջ 930:

55 Տե՛ս **Դիոդորոս**, XIV, 29,1, նաեւ՝ **Diod.**, *նոյն տեղում*:

56 Տե՛ս **И. Х. Дворецкий**, *նշ. աշխ.*, том I, էջ 330:

57 Այս ամէնով հանդերձ պէտք է նշել, որ, եթէ Հեկատէոսը ոչինչ չգիտէ ամազոնուհիների վերաբերեալ, ապա նրա գործի շարունակող Ստեփանոս Բուզանդացին վերջիններիս մասին խօսում է բաւականին մանրամասն: Տե՛ս **В. В. Латышев**, *Известия...*, ВДИ, 1948, N 3, էջ 314:

Սխալն ակնյայտ է, քանզի այդ քաղաքի տեղանքը չափազանց հեռու էր այն վայրերից, որտեղով անցնում էր նահանջող յոյների երթուղին[58]: Թարգմանիչների հետ չի կարելի համաձայնել միայն մէկ խնդրի կապակցութեամբ: Նրանք, այն հարթավայրը, որտեղ գտնուել է Գիւմնիասը, տեղակայում են Բաբերդի գոգահովտում, որը հաւանական չէ, քանզի այդ անուանումը հանդիսանում է հին բառագիտական միաւորի վերանուանումն արդի ոճաբանութեամբ: Քսենոփոնի օրօք Բաբերդ քաղաքը, բնականաբար, գոյութիւն չունէր, իսկ վերոյիշեալ գոգահովիտը յայտնի էր Խաղտեաց դաշտ անուամբ[59]:

Հեկատէոսի յայտնած վկայութիւններից անլուծելի է մնում վեխիրների տեղադրութեան խնդիրը: Ինչ վերաբերում է դիզիրներին, ապա նրանք, ինչպէս ասում է մատենագիրը, բնակուել են խոյերից արեւելք, բայց թէ կոնկրէտ որտե՞ղ՝ եւս անհնարին է ստոյգ պատասխանել, քանզի չկան լրացուցիչ վկայութիւններ: Այսպիսով, ըստ VI-V դարերի սահմանագլխին ապրած եւ ստեղծագործած մատենագիր Հեկատէոսի եւ նրանից յետոյ հանդէս եկած այլ հեղինակների՝ Հերոդոտոս, Քսենոփոն եւ այլն, Հայաստանում իշխած Երուանդունիների թագաւորութեան հիւսիսարեւմտեան ծայրամասն ունեցել է այսպիսի սահմանագիծ. այն անցել է տաոխների՝ հետագայ Տայքի տարածքով, ապա՝ կոլխերի, խալիւբների, խալդէյների, մակրոնների, մոսսինոյկների, ապա՝ կրկին խալիւբների, բայց այս անգամ՝ արեւմտեան, եւ վերջապէս՝ տիբարենների երկրներով:

Սակայն այսքանով եւս չեն աւարտւում Հեկատէոսի վկայութիւնները Հայաստանի կապակցութեամբ: Նրա վկայութիւններում կան այլ բացեր, որոնք կարօտ են քննարկման եւ վերլուծութեան: Քաջ յայտնի է, որ Հայաստանի՝ աքեմենեանների կողմից նուաճուելուց յետոյ, տարածքի հիմնական մասը, ինչպէս նշում է Հերոդոտոսը, ընդգրկուել է 13-րդ սատրապութեան մէջ: Այս կապակցութեամբ պատմիչը վկայում է. «Պակտիւիկէից, արմէններից եւ հարեւաններից՝ մինչեւ Եւքսինեանը, ստացւում էր չորս հարիւր տաղանդ. սա տասներեքերորդ նահանգն էր..»[60]: Պակտիւիկէ (Πακτυική) երկրի տեղադրութեան խնդիրը որոշ ուսումնասիրողների համար վերածուել է իսկական կուռախնձորի: Գ. Կիպերտը այն տեղադրում է Վանայ լճից հարաւ, իսկ Յ. Մանանդեանը գտնում է, որ անհնարին է տալ ինչ-որ միանշանակ պատասխան: Ս. Տ. Երեմեանն էլ ենթադրում է, որ այն եղել է Կորդուք նահանգի տարածքում: Մենք չենք կիսում վերոյիշեալ կարծիքներից եւ ոչ մէկը: Չի կարելի համաձայնել նաեւ Հերոդոտոսի ռուսերէնի թարգմանիչ Գ. Ա. Ստրատոնովսկու հետ, որը Պակտիւիկէն հասցնում է Քաբուլ գետի հովիտը՝ ներկայիս Աֆղանստանի տարածքում[61]: Վերոյիշեալ հեղինակների մոլորութեան պատճառներից է այն հանգամանքը, որ Հերոդոտոսն, ըստ էութեան, յիշատակում է երկու, իրար հետ ոչ մի օրգանական կապ չունեցող Պակտիւիկէների մասին: Մեր կողմից օգտագործուած վերոյիշեալ մէջբերումում, ակնյայտ է, որ խօսւում է Հայաստանի հարեւանութեամբ գտնուող վարչա-տարածքային շրջանի մասին, որը միաժամանակ չափազանց մօտ է գտնուել Սեւ ծովին: Հերոդոտոսն իր մտքերը, որքան էլ թուայ տարօրինակ, քօղարկուած տարբերակով շա-

58 Տե՛ս **Քսենոփոն**, էջ 236, ծնթ. 32-33. նաեւ՝ **Յ. Մանանդեան**, *Հին Հայաստանի եւ Անդրկովկասի պատմութեան մի քանի պրոբլեմների մասին. Երկեր*, հտ. Ե, Եր., 1970, էջ 263-266, 268-271:

59 Տե՛ս **Л. Т. Гюзальян**, *Неизданные надписи Байбуртской цитадели*,- "Византийский временник", том 8, М., 1956£

60 Հերոդոտոս, III, 93

61 Տե՛ս **Геродот**, *История*, էջ 719:

© National Library of Armenia

րադրում է Արքայական ճանապարհի *նկարագրութեան մէջ, որը կառուցել էր Դարեհ Ա-ը: Դրա մի փոքրիկ հատուածը քաջ յայտնի է, որ անցել է Հայաստանով եւ Հերոդոտոսն այս կապակցութեամբ նշում է. «Փռիւգիայից յետոյ (ճանապարհը) տանում է դէպի Հալիւս գետը, որտեղ (լեռնային) դարպասներն են, որոնցով անցնելուց յետոյ կտրում-անցնում ես գետը: Անցարանում կայ ուժեղ ամրացուած անցակէտ: Այնուհետեւ Կապադովկիա մտնելով, ճանապարհը ձգւում է մինչեւ Կիլիկիայի սահմանը, քսանութ կայան՝ հարիւր չորս փարսախ: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրունք եւ կողանցել երկու պահակակէտ: Դրանք անցնելուց յետոյ Կիլիկիայի միջով ճանապարհը ձգւում է երեք կայան՝ տասնհինգ եւ կէս փարսախ»[62]: Այսպիսով,* Արքայական ճանապարհի *այս հատուածը ձգուել է Հայաստանի արեւմտեան սահմանի հարեւանութեամբ, որն Աքեմենեան կայսրութեան կազմում ընդգրկուած է եղել 13-րդ սատրապութեան կազմում: Հայ պատմագիտութեան մէջ ճանապարհի այդ հատուածը, բոլորից աւելի մանրամասն քննարկուել է Յ. Մանանդեանի կողմից: Յաւօք, նշանաւոր հայագէտ-պատմաբանին չի յաջողուել գտնել այդ ճանապարհի ստոյգ երթուղին: Արդիւնքում նա գտել է, որ ճանապարհը Կապադովկիայից հասել է Մելիտենէ (Մալաթիա), ապա հատել է Եփրատը, ապա Տիգրիսը, եւ վերջինիս զուգահեռ, ձգուելով նրա ձախ ափով, հասել է Բեզաբդէ կամ Բզաբդէ քաղաքին: Ճանապարհի այսպիսի ուղղութիւնը պարզապէս իռացիոնալ էր, քանզի այն անտեղի երկարացում էր: Աւելին, այս դէպքում ճանապարհից դուրս է մնում Կապադովկիան, որի մասին յիշատակում է Հերոդոտոսը[63]: Անտեսւում է նաեւ մէկ այլ կարեւոր փաստ: Ճանապարհը կառուցելիս Դարեհն աշխատել է հնարաւորինս ոչ միայն խուսափել բարձրալեռնային տեղանքներից, այլեւ այն անցկացրել է նպաստաւոր բնակլիմայական պայմաններ ունեցող տեղանքով: Յ. Մանանդեանն այդ ճանապարհը գծել է Հայաստանի հարաւային լեռնային այն շրջանների տարածքով, որտեղ տարուայ ընթացքում մի քանի ամիս կլիմայական պայմանները համեմատաբար աննպաստ էին: Այս պայմաններում պարզ է, որ ճանապարհը չէր կարող գործել ողջ ծանրաբեռնուածութեամբ, բոլոր ամիսների ընթացքում: Միայն մեր կողմից առաջադրուած պայմանների առկայութեան դէպքում է, որ ճանապարհը կարող էր լինել արդիւնաւոր, ի տարբերութիւն Յ. Մանանդեանի առաջադրած վարկածի: Ճանապարհի հայաստանեան, կապադովկեան եւ Կիլիկիայի հատուածներում պարսիկները, մեր կարծիքով, պէտք է աշխատէին հնարաւորինս այն մօտեցնել Եփրատին, որը նաւարկելի էր՝ Զեւգմա քաղաքից սկսած: Այսպիսով, ճանապարհի կառուցման ժամանակ դրուելու էր երկու կարեւոր նախապայման. տեղանքի բարենպաստ կլիմայ ունենալու խնդիրը եւ, երկրորդ՝ լրացուցիչ ջրային, այս դէպքում գետային ճանապարհ լինելու առկայութիւնը, ինչպէս Եփրատն էր կոնկրէտ դէպքում: Վերոյիշեալ պայմանները պարտադիր էին* Արքայական ճանապարհի *հէնց հայաստանեան հատուածի համար, քանզի այն էապէս տարբերւում էր ճանապարհի միւս երկու ծայրերից: Ի տարբերութիւն ճանապարհի պարսկական եւ փոքրասիական հատուածների՝ Հայաստանն ունէր ոչ միայն համեմատաբար խիստ բնակլիմայական պայմաններ, այլեւ որոշ տեղերում՝ աննպաստ լեռնագրութիւն: Այս պատճառներով խնդրառու կը լինէր ճանապարհը կառուցել Բզաբդէ-Մելիտենա գծով, որն անցնելու էր անպայման Ամիդի եւ Տոմիսայի վրայով, այսինքն՝ Հայկական Տաւրոսի՝ թէկուզ եւ ոչ ամենաբարձր հատուածով: Յ. Մանանդեանի վարկածը որոշ չափով հակասում է Հերոդոտոսի վկայութիւններին, որը գրում է. «Կիլիկիայի եւ Արմէնիայի սահմանը նաւարկելի գետն է, անունը՝ Եփրատ: Արմէնիայում յիսունվեց եւ կէս փարսախ տարածութեան վրայ կայ տասնհինգ կայան իջեւանատներով, այնտեղ կայ նաեւ պահակակէտ: Այս Արմէնիայից ճանապարհը մտնում է Մատիենէ, որտեղ կայ երեսունչորս կայան, հարիւր երեսունեօթ փարսախի վրայ: Այս երկրի միջով հոսում են չորս նաւարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նաւով անցնել (ընդգծումը մերն է – Յ. Յ.)»[64]: Այս վկայութիւնը ոչնչով չի հակասում բանականութեանը. պարսիկները ցանկացել են ճանապարհը տանել այն վայրերով, որտեղ ցանկացած անհրաժեշտութեան դէպքում կ'ունենային նաեւ լրացուցիչ ճանապարհ:*

Հերոդոտոսը, ինչպէս տեսանք վերջին վկայութիւնից, խօսում է Հայաստանով անցնող 56 փարսախի մասին (մէկ փարսախը հաւասար է 5549 մ, որի դէպքում 56-ը կը կազմի 320-330 կմ), որը նկատի չի ունեցել Յ. Մանանդեանը: Նրա առաջադրած երթուղու դէպքում ճանապարհը կազմում է 400 կմ մի փոքր աւելի, որը ձեռնտու չէր Դարեհին: Քաջ յայտնի է, որ Դարեհի գահակալութեանը զուգադիպեցին երկրում տեղի ունեցած հզօր ապստամբութիւնները, որը դաս հանդիսացաւ առաջին հերթին հէնց նրա համար: Նրան անհրաժեշտ էր Պարսկաստանը հնարաւորինս կապել նուաճուած տարածքների հետ, նոր ապստամբութիւնների դէպքում զօրքն արագ եւ անարգել տեղափոխելու համար: Բացի ռազմա-ստրատեգիականից՝ այն ունէր նաեւ քաղաքական եւ առեւտրա-տնտեսական նշանակութիւն: Այս պատճառներով էլ ճանապարհը պէտք էր կառուցել այն տարածքների վրայով, որի նպաստաւոր պայմանները եւս թոյլ կը տային նրա մշտապէս եւ անխափան գործունէութիւնը:

Մեր կարծիքով, ինչպէս իրաւացիօրէն ցոյց է տուել նաեւ Բ. Յարութիւնեանը[65], Կապադովկիայից Կիլիկիա իջնելուց յետոյ ճանապարհը ձգւում էր հիւսիս-արեւելքից դէպի հարաւ-արեւելք, մի լեռանցքով, որին արեւմուտքից յարում է Կիլիկեան Տաւրոսը, իսկ արեւելքից՝ Հայկականը: Այստեղից սկսած՝ ճանապարհն անցնում էր Հայկական Տաւրոսի հարաւային լանջերին զուգահեռ, ձգուելով համարեա ուղիղ գծով՝ արեւմուտքից արեւելք: Հէնց այս հատուածում էլ՝ Եդեսիայից մինչեւ Մծբին, մօտ 320-330 կմ, ճանապարհը գնում էր դէպի արեւելք, ուր հատում էր Տիգրիսը: Այս հատումից յետոյ միայն այն իջնում էր հարաւ՝ հասնելով եզրագծին՝ Շօշ:

Այստեղ անհրաժեշտ է կանգ առնել մէկ կարեւոր հարցի վրայ եւս. Հայաստանի հարաւային սահմանագիծը, նաեւ այն իրողութիւնից յետոյ, երբ այն բաժանուեց Մեծ եւ Փոքր Հայքերի (դա տեղի է ունեցել 331-330 թթ. Գաւգամելայից անմիջապէս յետոյ)[66]: Հայկական Տաւրոսի հիւսիսային եւ հարաւային լանջերի տարածքը վաղնջական ժամանակներից բնակեցուած են եղել հայերով եւ առաւել յայտնի է Հայոց Միջագետք անուամբ: Աւելի ուշ այստեղ, ըստ մի տեսակէտի, հիմնադրուեց Օսրոյենէի եւ Եդեսիայի հայկական թագաւորութիւնը (Ք.ա. 132 - Ք.յ. 216 թթ.), ուր իշխել են Աբգար անունով թագաւորները (այդ

62 Հերոդոտոս, V, 52

63 **Я. А. Манандян**, *О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времён;- Երկեր*, հտ. Զ, Եր., 1985, էջ 14-15

64 Հերոդոտոս, V, 52

65 Յ. Խորիկեան, *Աշխ.*, էջ 173-192

66 Տե՛ս **Квинт Курций Руф**, *История Александра Македонского*, сохранившиеся книги, под ред. В. С. Соколова, М., 1963, IV, XII, 10, 12:

© National Library of Armenia

Աբգարներից մէկին Տակիտոսն անուանում է նաեւ արաբների թագաւոր)[67]: Հէնց այս տարածքն էլ, մեր կարծիքով, նկատի ունէր Հերոդոտոսը, երբ վկայում էր Արքայական ճանապարհի *հայկական հատուածի մասին: Հիւսիսային կամ Հայոց Միջագետքի հայկականութեան վերաբերեալ յիշատակում է նաեւ Խորենացին[68]: Պատմիչը նաեւ պարզաբանում եւ բացայայտում է, թէ ինչպէ՞ս, ի՞նչ հանգամանքների բերումով, հայկական այդ տարածքները հետագայում անցան Հռոմի տիրապետութեան ներքոյ. «Բայց Թիկունս առնելով Երուանդայ (խօսքը Երուանդ Դ Վերջինի մասին է – Յ. Յ.) զհռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վէսպիանու եւ Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս»[69]: Այս վկայութիւնը եւս, կրկին անգամ ապացուցում է, որ այդ տարածքները Երուանդունիների գահակալութեան ողջ ընթացքում եղել են հայկական, եւ միայն վերջին Երուանդունու օրօք է, որ այն կորսուել է: Խորենացու գործընկեր Փաւստոս Բուզանդը այս տարածքների վերաբերեալ թողել է մի ուշագրաւ վկայութիւն: Նա նշում է, որ Պապ թագաւորը հայ-հռոմէական յարաբերութիւնների սրման շրջանում, իր դեսպաններին է ուղարկում Վաղէս կայսեր մօտ՝ հետեւեալ պահանջով. «...եթէ կեսարիաւ հետ՝ եւ տասն քաղաք մեր լեալ է, արդ՝ ի բաց տո՛ւր, եւ զՈւռհա քաղաք չինեալ է նախնեացն մերոց, արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել, տո՛ւր ի բաց, ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ...»[70]:*

Մեզ անհրաժեշտ է պարզել նաեւ Պակտիւիկէի պատկանելիութեան հարցը: Ամենայն հաւանականութեամբ, այս երկրամասը գտնուել է Երուանդունիների թագաւորութեան կազմում: Այս տարածքի վրայով էլ Երուանդունիները ելք են ունեցել դէպի Սեւ ծով: Պակտիւիկէ երկրով ամենակարճ ճանապարհը դէպի Սեւ ծով անցնում է Թերմոդոն(տ) գետի հովտով, որը յոյները կոչել են նաեւ Λύκος *(դա ներկայիս Թուրքիայում գտնուող Իշիլ-Իրմակ գետն է): Հայաստանի կապակցութեամբ Հեկատէոսի մեծաթիւ եւ բազմաբնոյթ հաղորդումները ցոյց են տալիս, որ նա (այդպէս եւ նրան շարունակողները) Հայաստանը համարում էին մէկ ամբողջական* organism: *Միայն Գաւգամելային մասնակցած Երուանդունուց յետոյ էր, որ պետութիւնը երկատուեց, որի մասին խօսեցինք վերեւում: Երկրի միասնականութեան խնդիրը պարզորոշ երեւաց խոյերի, մարերի, խալիբների, մոսսինոյկների... հարցերը քննարկելուց յետոյ:*

Պէտք է եզրակացնել նաեւ, որ Հեկատէոսը քաջատեղեակ էր Աքեմենեան Իրանի վարչա-տարածքային բաժանումների մասին, որ իրականացրել էր Դարեհը, եւ փաստօրէն գիտէր, թէ ինչպիսի վարչական կացութիւն ունէր Հայաստանը: Մենք ելնում ենք ոչ միայն այն հանգամանքից, որ Հեկատէոսն ու Դարեհը ժամանակակիցներ էին, այլեւ այլ կոնկրէտ փաստարկներից: Ասուածի լաւագոյն կռուան է Հերոդոտոսի հետեւեալ արտայայտութիւնը. «Բոլոր ներկանները համակարծիք են լինում եւ խորհուրդ տալիս ապստամբելու. միայն լոգոգրաֆ Հեկատէոսը, թուարկելով Դարեհին ենթակայ բոլոր երկրները եւ նրա ունեցած ռազմական ուժերը, սկզբում խորհուրդ է տալիս չպատերազմել պարսից արքայի դէմ»[71]: Այս վկայութիւնը պարզորոշ յուշում է, որ Իրանի վարչական բաժանումների, սատրապութիւններից իւրաքանչիւրի կողմից պետութեանը տրուող հարկերի եւ բանակին նորակոչիկներ տրամադրելու մասին տուեալները Հերոդոտոսը վերցրել է Հեկատէոսից: Փաստօրէն պարզւում է նաեւ, որ Հեկատէոսի աշխատութեան՝ մեզ չհասած հատուածներից մէկն էլ վերաբերել է այս հիմնահարցերին[72]: Այս վկայութիւնը նաեւ ապացուցում է, որ Հերոդոտոսը միշտ չէ, որ արդար է իր վկայութիւններում, քանզի նա իր մասին նշում էր. «...ես պարտաւոր եմ հաղորդելու այն ամէնը, ինչ պատմում են, բայց այդ ամէնին հաւատալու, ի հարկէ, ես պարտաւոր չեմ»[73]: Փաստօրէն, տեղեկանալով այդ ամէնի մասին, Հերոդոտոսը իրեն է վերագրում Իրանի ներքին կացութեանն առնչուող բազմաթիւ տուեալները[74]:

Հեկատէոսից յետոյ Սեւ ծովի հարաւարեւելեան արէալում՝ Հայաստանի, Վիրքի եւ Պոնտոսի միջեւ ընկած տարածքներում յայտնուեցին նաեւ այլ ցեղեր եւ ժողովուրդներ: Բայց նրանք չունեցան այն կենսունակութիւնը, որը ցուցաբերեցին վերեւում յիշատակուածները, ուստի եւ 10.000 յոյների արշաւանքից յետոյ այդ ցեղերը՝ փասիանները, ալարոդները, սասպէյրները, թերեւս կորցրին իրենց դէմքը: Այս պատճառով էլ նրանց մասին Ստրաբոնը ոչինչ չգիտի: Նրանք, ի վերջոյ հիմնականում միաձուլուեցին հայերին եւ վրացիներին. «...Ճորոխ գետի աւազանը Ք.ա. VII-VI դդ. բնակեցուած էր սկիւթական ցեղերով, որոնք հպատակուեցին տեղի հայերին, իսկ Ճորոխի գետաբերանում բնակուողներն՝ իրենց ենթարկեցին վրացական ցեղերին: Բայց Ք.ա. I հազարամեակի երկրորդ կէսին, հայ ժողովրդի կազմաւորման յորձանուտում նրանք հիմնականում ենթարկուեցին հայացման»[75]:

Այսպիսով, յենուելով Հեկատէոսի եւ նրա գործը շարունակող Հերոդոտոսի եւ Քսենոփոնի վրայ՝ մենք կարող ենք ուրուագծել Երուանդունիների թագաւորութեան գոնէ որոշ հատուածների սահմանները, իսկ առաջին հերթին՝ հիւսիս-արեւմուտքի եւ հարաւի: Իսկ դրանք, ինչպէս տեսանք, վերոյիշեալ մատենագիրների վկայութիւնների համադրումից, համարեա համընկնում էին հետագայում ձեւաւորուած Մեծ եւ Փոքր Հայքերի սահմաններին՝ միասին վերցրած:

67 **Тацит,** *Анналы*, том I, XII,12; տե՛ս նաեւ **Հ. Գ. Մելքոնեան,** *Ադիաբէնի պետութիւնը եւ Հայաստանը*, Եր., 1980, էջ 113:

68 Տե՛ս **Խորենացի,** Բ, լգ, լզ:

69 *Նոյն տեղում*, Բ, լը

70 **Փաւստոսի Բուզանդացւոյ** *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, Ե, լբ: Համարեա նոյն միտքն արտայայտուած է Սեբէոսի մօտ՝ կապուած այլ իրողութեան հետ. տե՛ս *Պատմութիւն* **Սեբէոսի,** աշխ. **Գ. Վ. Աբգարեանի,** Եր., 1979, ԺԱ, 15-35:

71 **Հերոդոտոս,** V, 36

72 Քանի որ շարադրանքի ընթացքում յատկապէս մեծ տեղ յատկացրինք Հեկատէոսի պատմաաշխարհագրական ժառանգութեանը, ապա պէտք է յիշենք, որ նա եւս իր ժամանակի ծնունդն էր: Ինչպէս նշում է Է. Ֆրոլովը. «... իրականում լոգոգրաֆներն աչքի էին ընկնում եւ տարբերակւում մի շարք այլ գծերով: Նրանք պատմիչներ էին, բայց դեռեւս, որպէս այդպիսին, մնում էին չկայացած» (**Э. Д. Фролов,** *Факел Прометея. Очерки античной общественной мысли*, Л., 1981, էջ 96):

73 **Հերոդոտոս,** VII, 152

74 Դրան են վերաբերում Հերոդոտոսի *Պատմութեան* III գրքի 89-94 գլուխները: Եթէ Հերոդոտոսի հաւատոյ հանգանակն է Հեկատէոսին լռելեայն շրջանցելը, ապա Ստրաբոնի մօտ կան նենգափոխման տուեալներ: Վերջինս Հեկատէոսին ներկայացնում է որպէս փիլիսոփայ, բանաստեղծ, Հոմերոսի գործի շարունակող... Տե՛ս **Strabo,** I, I, 1, 11; I, II, 6: Բայց իր հետագայ շարադրանքում, երբ անհնարին է դառնում որոշ հարցերի մեկնաբանումը, նա հարկադրուած նշում է Հեկատէոսի անունը՝ որպէս պատմիչ-աշխարհագէտի. տե՛ս **Strabo,** VI, II, 4; VII, III, 6; VII,V, 8; VII,VII, 1:

75 **Б. А. Арутюнян,** *К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н. э.*;- ԼՀԳ, 1995, թիւ 1-2, էջ 246

© National Library of Armenia